գաղտնի կամ յայտնի և արդէն հաշտուել են այդ դրութեան հետ. եթէ հաշուենք առանց ամուսնութեան կենակցողներին, կրկնակիններին և կրկնայր ունեցողներին, ինչպէս որ կարդում ենք Աղտարատի սոյն համարի Տաճկահայք կոչուած բաժնում, իրօք շատ ծանր և անմխիթար պատկեր կըստանանք։

Ո՞րտեղ է չարեաց աւմատը։ Իսկապէս սէր կոչուած զգացմունքն է բոլորի առիթը, տնտեսական խնդիրներն են արդեօք այս տխուր երևոյթներ բացատրելու միակ բանալին, ինչպէս սովորենք լսել. կրթութիւնն ու ճաշակն են նրանց առիթ տուողը, թէ ծանրութեան գլխաւոր կեդրոնը պէտք է մի այլ տեղ որոնել։

Անշուշտ տնտեսական խնդիրները բաւականին մեծ նշանակութիւն ունին, անշուշտ ազդում է թեթև և կրքի պաշտամունքով կենցաղավարութիւն քարոզող կեղևակրթութիւնը, բայց մեր կարծիքով ամենագլխաւոր պատճառն այն է, որ մեր անհոգութեան, տգիտութեան և ծուլութեան շնորհիւ մարդկանցից ծածուկ է պահւում ամուսնական կեանքի քրիստոնէական իդէալը և նրա վրայ հիմնուած եկեղեցական ամուսնութեան ճշմարիտ պահանջներն ու այդ խորհրդի ամենաէական և վեհ մասը։

Բայց ամուսնական խորհրդին, նրա վերաբերեալ օրէնսդրութեան և Աւետարանի դծած իդէալին կը դառնանք միւս անգամ։

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Համաձայն Վեհափառ Հայրապետի միջնորդութեան Աստրախանի Թեմական առաջնորդ Գերապատիւ Տ. Արիստակէս աշքեպիսկոպոսին Բարձրագոյն թոյլատրուեց մեկնել արտասահման բժշկուելու համար։

Թիֆլիզ մեկնեց Սինոդի անդամ Դերապատիւ Տ. Մակար եպիսկոպոսը տասնեհինգօրեայ ժամանակաւ՝ իւր հիւանդութիւնը դարմանելու, որի առթիւ և հրաժարական ներկայացրեց Վեհափառ Հայրապետին Սինոդի անդամութիւնից։

Հիւանդութեան պատճառաւ հրաժարական ներկայացրեց նաև Սինոդի անդամ Տ. Մխիթար վարդապետը բժշկական վկայականի հետ, որև համաձայն օրինաց ուղարկուեց ուր անկն է։

Ս. Էջմիածին վերադարձաւ Հմայեակ վարդապետ Արշարունին, որ տասն և հինգ օրեայ արձակուրդով գնացել էր Թիֆլիզ։

Վեհափառ Հայրապետի կողմից Թիֆլիզ ուղարկուեցին Սանահնի վանքի վանահայր Դարեգին եպիսկոպոս Սաթունեան և դիւանապետ Կորիւն վարդապետը հանդուցեալ Աբգար Յովհաննիսեանի յուղարկաւորութեանը մասնակցելու նորին ս. Օծութեան կողմից։

Նոյն նպատակաւ Թիֆլիզ մեկնեցաւ և Հայրապետական փոխանորդ տ. Կարապետ վարդապետն Երևանի կողմից։ Այս առթից օգտուելով ճեմարանի ուսուցչական խումբը խնդրեց նրանից ներկայացուցիչ և թարգման լինել իւր զգացմունքների նաև Դէորգեան ճեմարանի կողմից։

Մայր աթոռ հասաւ Հին Նախիջևանի փոխանորդ տ. Իսահակ վարդապետը և 15 օրեայ արձակուրդով մեկնեց Թիֆլիզ և Հայրենիք։

Ամսոյս տասն և ութին ս. Էջմիածնի մայր տաճարում Նորին Վեհափառութեան և ամբողջ միաբանութեան ներկայութեամբ կատարուեց հոգեհանգիստ հանգուցեալ Աբգար Յովհաննիսեանի, որի ժամանակ դամբանական խօսեց Եղիշէ վարդապետը։ Հոգեհանգստից յետոյ հանդուցեալի որդուն ուղարկուեց հետևեալ հեռագիրը.—Այսօր Միածնաէջ տաճարում ամբողջ միաբանութեան մասնակցութեամբ հոգեհանգիստ կատարուեց ձեր հանգուցեալ հօր համար։ Վեհափառ Հայրապետն օրհնում է

հանգուցեալի յիշատակն և մաղթում Արարչին ուղարկել մխիթարիչ ս. Հոգին՝ ձեզ հասած վիշտը սփոփելու։

Հանգուցեալ Աբգար Յովհաննիսեանի յուղարկաւորութեանը ներկայ գտնուելու համար Թիֆլիզ ուղարկուեց Երևանի թեմական դպրանոցի տեսուչ Տ. Դարեգին վարդապետը, որպէս նոյն դպրանոցի ներկայացուցիչ։

ՆԵՐՍԷՍ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ

7. *Ներսէսի գործունէութիւնը Օծումից յետ։* ա. Կաթուղիկոսը Թիֆլիզում։ Ներսէսը իւր գործունէութեան լաւագոյն տարիներն անցրել էր Թիֆլիզում։ այդտեղ նա մաքառումներ էր ունեցել և փայլուն յաջողութիւններ ձեռք բերել, այդտեղ էր նրա ստեղծած և փայփայած ազգային եկեղեցական մեծ հասատատութիւնը, Ներսիսեան հոգևոր դպրանոցը, որը նա իւր կոնդակներից մէկում՝ ուղղած Մկրտիչ Էմինին, մինչև անդամ համալսարան է կոչում։ Բանի Ներսէսը Քիշինևումն էր, Թիֆլիզում միմիանց յաջորդել էին մի քանի առաջնորդներ, վերջինը Ախալցխայի Կարապետ եպիսկոպոսն էր։ Ներսէսը հէնց որ կաթուղիկոս օծուեց և վանքի ընթացիկ գործերը փոքր ինչ կարգի բերեց, լրացրեց Սինոդի անդամների թիւը, Դուկաս եպիսկոպոսին կարգեց իրան տեղապահ և ինքը վերադարձաւ Թիֆլիզ։

Ծերացած և յոգնած ժամանակ եկեղեցական ծայրագոյն իշխանութիւն ձեռք բերած կաթուղիկոսն այլևս անկարող էր աչքի ընկնող մեծ ծրագիրներ ունենալ։ Եւ հէնց այն հանգամանքը, որ ամենից երկար Թիֆլիզումն էր մնում, ցոյց է տալիս, որ նրա ցանկութեան և գործունէութեան ծրագիրը կայանում էր նրանում՝ — շարունակել իւր առաջնորդութեան օրով սկսուած գործերը, և